

9346

С. 1930/664.

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ՆԱՎԹԸ

ՅԵՎ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ“

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ.Ս.Խ.Հ. ԿՈՒԼՏՈՒՐԱԾԻՏԱՆ

ՄՈՍԿՎԱ

1929

9(47.925)

4-32

Ca<sup>Λ</sup>1429  
9(47.925)  
4-32

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

C1930/664  
01 SEP 2011

31 AUG 2007

ՆԱՎԹԸ

ՅԵՎ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ“

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿ. ԿՈՒՆՏՈՒՐԱԾԻ ՏԱՆ  
ԽՈՍԿՎԱ.

1929

А. Каринян

## НЕФТЬ И „АРМЯНСКИЙ ВОПРОС“



60344-67

Главлит № А 24967

Тираж 750.

3-я тип. ГИЗ-а С.С.Р. Армении  
Москва, Армянский пер., 2.

## ՆԱԿԹԸ ՅԵՎ „ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ“

1.

Հայ բուրժուազիայի արտասահմանյան «զի-վանագետների» և հրապարակագիրների շարքե-րում սկսվել է վերջերս մի նոր իրարանցում:

Խորհրդային հանրապետության յերեկվա պո-ռտախոս թշնամիներն անգամ գտնվում են կարծես շժմած դրության մեջ: Դաշնակցական «ամենայեռանդուն» մոնետիկներն անգամ կոր-ցրել են իրենց գլուխը և հապճեպ կերպով ճիգ են անում նոր հենախեղներ գտնել, արգարանալ իրենց հետևող միամիտ արտասահմանյան աշխա-տավորական խմբակների առաջ, և միաժամանակ որ առաջ մշակել վորեւ նոր մի «խմաստա-րություն» նացիոնալիստական քայքայվող բա-նակի ամրացման համար:

Դա շատ հետաքրքրական մի յերևույթ է, վոր ավելորդ անգամ գալիս է պարզելու և հաստա-տելու նացիոնալիստական գաղափարախոսության կատարյալ անանկությունը:

Դեռ մի քանի ամիս առաջ, հակա-խորհրդա-յին այն պայքարի որերին, վոր կազմակերպել էր անգլիական իմպերիալիզմը, ակներև եր այն,

վոր վերջինի ձեռնարկությամբ սկսված շարժումը բացի ուսս սպիտակ գվարդիականներէց վորոշ հենարաններ ե վորոնում նաե կովկասյան հակահեղափոխականների շարքերում:

Այդ կարծիքը չեք հենվում միայն հասարակ տրամաբանական յենթադրության, այլ մեծագույն չափով նաե եմիգրանտական ռուսոյա գրականության մանրամասն քննության վրա:

Այդ գրականությունը, և միաժամանակ նաե ակնարկած հոսանքների «գործնական քաղաքականությունը» մի բան համեմայն դեպս ցուցադրում եյին շատ պարզ կերպով:

Այդ այն եր, վոր մենշևիկների և մուսավաթականների հետ միասին դաշնակցականներն ևս բացահայտ կերպով պատրաստություններ եյին տեսնում «գործի անցնել» և ոժանդակ ուժ դառնալ կազմակերպվող հակահեղափոխական արշավի և հակա-խորհրդային ձեռնարկությունների համար:

Հայ բուրժուազիայի կազմակերպության դերն այնքան վորոշ և ակտիվ եր, վոր վորոշ քննադատության եր արժանանում նույնիսկ արտասահմանյան շրջանների մի քանի «չեզոք» խմբակցությունների կողմից: Բավական ե միայն հիշել այստեղ ամերիկահայ պարբերաթերթ «Պայքարը» դերքը:

Դաշնակցական յերկու «հայտնի» որգանները—«Հայրենիքը» և «Հուսարբերն» այնքան վորգերովել եյին այդ որերին, վոր շտապել եյին

առանց սովորական «գիմնագիտության» ի հայտ բերել իրենց բոլոր յենթադրությունները և իսկական ձգտումները:

Փառաբանելով «քաղաքակրթության» համար պայքարող անգլիական իմպերիալիստներին, խաբաղանելով «պացիֆիստներին», քննադատելով «չեզոքներին» նավասարդյաններն ու վարանդյանները վարդազույն հեռանկարներով տարված կոչ եյին անում բոլորին «կազմակերպվել» և «պատրաստվել» գալիք արշավանքի համար:

Դաշնակցական բոլոր նախկին նախարարների, Սատիսյանի, Վրացյանի, Զիլինկարյանի, Նավասարդյանի և մյուսների հողվածները տողորված եյին ռազմատենչ տրամադրությամբ, վառված այդ «նոր հույսով», դրանք այլևս ավելորդ եյին գտնում «անտեղի հոգատարությունը» գաղթականների մասին և ամենևին չեյին ել ծածկում այն, վոր վոչ միայն չեն ցանկանում հրաժարվել գաղթականության պատկանող գումարների յուրացման և խժուելու քաղաքականությունից, այլև կտրականապես հակառակ են Նանսենի առաջարկների իրագործման և կոնկրետ կիրառմանը: Թիֆլիսի հայ բուրժուազիայի հայտնի ջոջերից մեկը, Սատիսովը, համեմայն դեպս այնքան հեռուն ե գնացել այդ ուղղությամբ, վոր ցինիկորեն հակադրել ե Նանսենի ծրագրին—դաշնակցական Հայաստանի շուտափուլ իրականացման պրոեկտը:

Անգլիական գիմնագիտության «նոր ըն-

թացքը» համապատասխան գույն ե տվել և հայ սպիտակ-եմիգրանտների գրականությանը: Դեռ մի քանի ամիս առաջ վողջ այդ գրականությունը ինքնավստահ ձայնով յերգում եր միաբերան «Մոսկվայի մահվան», «Կովկասի և Յերեվանի բոլշևիկների տապալման», «Նոր», «Ղաջնակցական Հայաստանի» կազմակերպման մասին...

Խորհրդային Հանրապետության և Ֆրանսական կառավարության հարաբերությունների սրումը մի կողմից, և արոցկիստական ուղղիցիայի յեւույթները մյուս կողմից գալիս եյին կարծես նորից խրախուսելու ղաջնակցականներին, և «Նոր յեռանդ» ներշնչելու «հին որերի» դարձի մասին յերազող հակահեղափոխական հատվածներին:

Յեւ այդպես շարունակվում ե մինչ այն մոմենտը, յերբ ակնհայտնի յե դառնում՝ նախ այն, վոր Խորհրդային Իշխանությունն ավելի քան ուժեղ կերպով ե կանգնած իր զինքերի վրա, և ապա այն՝ վոր իրենք իմպերիալիստական պետություններն ել՝ շնորհիվ միջազգային բարդ փոխհարաբերությունների և ներքին ներհակությունների՝ չեն կարողանում համաձայնության գալ և անցնել հակա-խորհրդային արշավանքի միասնական կազմակերպմանը: Յեւ ահա այդ մոմենտները քանի գնում այնքան ավելի և ավելի պարզվելով անհրաժեշտաբար վորոշ տարալուծում են մտցնում կովկասյան հակահեղափոխականների շարքերի մեջ:

Դրանք շատ մեծ հույսեր եյին կապում «ներքին խլրտումների» հետ:

Բայց հակահեղափոխականների առաջին փորձերն արդեն ստանում են անհրաժեշտ հակահարված: Պրոլետարական պետությունը վճռական հարված տալով իմպերիալիզմի ջանքերով պատրաստվող հակահեղափոխական խմբերի գործունեյությանը, միաժամանակ իր բնում արդեն ջախջախում ե բանվորների և գյուղացիների թշնամիների կազմակերպչական ձեռնարկները:

Վորոշ հույսեր եյին կապվում «արոցկիստներ»-ի հետ:

Սակայն բոլշևիկյան պողպատե կուսակցությունը վճռական պարտության ե մատնում արոցկիստական-ընդդիմադրականներին, և ամենակարող կերպով դեն նետելով կուսակցության միասնականության խանգարողներին իր շարքերից՝ անցնում ե որստորե ուժեղացող սոցիալիստական շինարարության աշխատանքին ավելի միաձույլ և ամուր շարքերով:

Վերջին հույսերից մեկն եր իմպերիալիզմի ձեռնարկած արշավը: Բայց այդ «արշավանքն» ել հապաղում ե շնորհիվ անակնկալ «բարդությունների» Ձինաստանում և Հնդկաստանում: Յերկու այդ յերկրներում ել իմպերիալիստական Անգլիան ստանում ե մի շարք ծանր հարվածներ: Չնայած ժամանակավոր տեղատվության—չինական ժողովրդական զանգվածներն այսօր ևս շարունակում են իրենց պայքարն

իմպերիալիզմի դեմ, և որստորե ուժեղացած և կազմակերպված հունի մեջ են մտցնում իրենց հեղափոխական շարժումը: Ինչ վերաբերում է Հնդկաստանին, այդտեղ ևս, ազգային հեղափոխական շարժումներն ամենասուր ընթացք են ընդունել, և զրգել նույնիսկ անգլիական կառավարությունը վճռական միջոցների դիմել հնդիկ խաղաղ ընդդիմադրականների (սվարաշխատներ) դեմ:

Մեծ հարված է լինում Անգլիայի համար նաև Ավդանիստանի եմիրի ճանապարհորդությունը: Անգլիական դիվանագիտությունը մեծ պատրաստություններ եր տեսել հանդիսավոր բնույթ տալ եմիրի ընդունելությունը, և իր ազդեցություն յենթարկել հնդկական սահմանների ապահովության համար այնքան կարևոր յերկրի ղեկավարին: Բայց այդտեղ ել նա ստանում է հարված: Եմիրը մտնում է Յեզիպտոս, և հակառակ բոլոր «անգլիական տրադիցիաներին» ճառ է ասում յեզիպտական պարլամենտում, վորի ընդհանուր իմաստն ուղղված է լինում անգլիական իմպերիալիզմի դեմ: Դա — ցույց եր: Յեվ այդպես ել հասկանում են եմիրին թե յեզիպտական նացիոնալիստները և թե անգլիական դիվանագետները: Անգլիական թերթերն իրենց կողմից անբավականություն են հայտնում նաև այն առթիվ, վոր չբավականանալով Լոնդոնի այցելությունամբ՝ եմիրը վորոշել է վերադարձին այցելել «ուրիշ յերկրներ» ևս:

Սակայն ավելի ևս վճռական հարված է ստանում անգլիական դիվանագիտությունը «նավթային խնդրի» բնագավառում:

Անգլո - խորհրդային հարաբերությունների խզումից հետո՝ Անգլիան մեծ հույսեր ուներ այն մասին, վոր կկարողանա խանգարել խորհրդային նավթի արտասահմանյան եքսպորտին:

Անգլիական խոշորագույն նավթային տրեստի — «Շելլի» ղեկավարներից մեկի՝ Դեաերտինգի բոլոր մախինացիաները Ֆրանսիայում, Դեաերտինգի հետ կապված և նավթային այդ իշխանի զբաղմունքով կերակրվող կովկասյան և ռուսական զանազան խմբակների յեղությունները չեն հասնում իրենց նպատակին: Իսկ չեն հասնում իրենց նպատակին ի միջի այլոց նաև շնորհիվ նրան, վոր անգլիական իմպերիալիզմը չի կարողանում համաձայնություն գալ իր մրցակից ամենախոշոր ուժերից մեկի — ամերիկյան բուրժուազիայի հետ:

Վորպես ամեն մի կապիտալիստական պետություն՝ ամերիկյան կառավարությունն ել, անշուշտ, հակառակ է բանվորների և գյուղացիների հանրապետության: Բայց զրա հետ միասին ամերիկյան բուրժուազիայի վորոշ հատվածների շահերը ներկայումս բավական սուր կերպով ընդհարվում են անգլիական բուրժուազիայի շահերի հետ: Շնորհիվ շահերի հենց այդ բաղիման ել անգլիական իմպերիալիզմը չի կարողանում առաջ տանել իր քաղաքականությունը, և ընդհարվում է ամերիկյան ամենախոշոր

նամթային կոնցերնի—«Ստանդարտ Ոյլի» հետ, վորը, շահագրգռված լինելով խորհրդային նավթով, ցանկանում է հարված տալ իր կոնկուրենտ անգլիական «Շելլ» ընկերության:

Յեւ վահա հենց այդ վերջին հանգամանքն էլ վճռական նշանակութիւն ունի դաշնակցականներին նորագոյն «կուրսի» ճանաչողութեան համար:

Շատ վորոշ կերպով այդ նկատում ենք ամերիկահայ հայանի դաշնակցականներէից մեկի, պ. Գարդաշյանի մոտ, վորը վերջերս մի հոգիւմի մեջ, շտապել է իր մշտական սովորութեան համեմատ, դուրս թռցնել բերնից մի շարք «դառն խոստովանութիւններ»:

Հոգիւմի սկզբնական մասում այդ պարոնն աշխատում է ամեն կերպ ապացուցել ընթերցողներին, վոր ինքը միշտ նշանակութիւն է տվել «նամթի խնդրին» և, վոր «հայկական հարցն» էլ կապված է յեղել «նամթային խնդրի» հետ:

Յես չեմ ցանկանում այստեղ վորոշել թե վորքան «անկեղծ» կամ իրավացի յե պ. Գարդաշյանը: Իրապես, իհարկե, նա անցյալում վոչ մի այդպիսի բան չի ասել: Յեթե ասեր, այդ պարագայում վոչ-վոք հավատ չեր ընծայի նրա մշտական այն քաղաքականութեանը, վոր մղվել է իմպերիալիզմի դատի համար, թեև առաջադրվել է «հայկական դատի» անվան տակ... Ներկա պարագայում այդ չե կարևորն իհարկե,

կարևորը—իմպերիալիզմի հնագոյն այդ լակեյի մի քիչ ուշացած խոստովանութիւնն է:

«Ամերիկայի պետական պաշտոնատունը, հաղորդում է կոտրված ձայնով Գարդաշյանը, պաշտոնապես վերացուց սովետական Ռուսաստանին անհատական փոխառութիւնն ընելու դեմ դրված արգելքը: Ասիկա առաջին քայլն է դեպի առևտրական համաձայնութիւնը, և յեթե քարոյուղի խմբակն ու Մոսկվան համաձայնին Սթանդարտ ընկերութեան Պաքուի մեջ ներկայացուցած պահանջներուն շուրջ, այն ատեն ուրիշ քայլեր պիտի հաղորդեն աստիճանաբար»... («Հայրենիք», Վ. Գարդաշյան, «Քարոյուղը և Հայաստան», № 4751):

Ապա—այդ տողերից հետո— Գարդաշյանը միևնույն շփոթ տոնով, հաղորդում է այն մասին, վոր ինքն «անցյալ շաբաթ յեղել է վաշինգտոն» (ըստ իր սովորական պոռոտախոսութեան— Գարդաշյանն ասում է, վոր ինքը— «հրավիրված է յեղել Վաշինգտոն վորոշ ծերակուտականներու կողմե, վորոնք կուղեյին խորհրդակցել դաշնագրին և Հայաստանի հետ կապ ունեցող կացութեան նոր փուլերուն վրա»...):

Յեւ վահա այդ ճանապարհորդութիւնից հետո Գարդաշյանը «խելքի» յե գալիս...

«Կացութեան մասին, պատմում է նա, մեր ստացած տեղեկութիւնները, ինչ վոր կվերաբերին Հայաստանին, չափեն ավելի ցնցող բնույթ կրկրեյին»: Բանից դուրս է գալիս, վոր «Հա-

յաստանն ու հայր պիտի գոհեն (կարդա՝ «դաշ-  
նակցական Հայաստանի իրագործումը», Խոր-  
հրդային Հայաստանի տապալումը)» — վորպեսզի  
Ամերիկան տիրանա քարյուղի վորոշ հանքերուն: Յեւ  
ապա հաղորդվում է անկապ կերպով, վոր  
«քարյուղի խմբակի ծրագիրը հաջողվում է», և  
վոր դրա հետևանքով կարող է նախ՝ ճանաչվել  
Խորհրդային Միությունը», և ապա — տապալվել  
դաշնակցականների «ծրագիրը» խորհրդային իշ-  
խանության տապալման մասին:

Գարդաշյանն այդ բոլորը, ասում է, ինչպես  
շեշտեցի, խիստ ցրված և անկապ կերպով: Յեւ  
միաժամանակ իրեն արդարացնելու համար մի  
քանի անգամ հիշատակում է «նավթի» մեծ  
նշանակության մասին, և զիմում նույնիսկ «հե-  
ղինակավոր մարդկանց» ոգնությանը...

«Յես այժմ, աղաղակում ե նա, պիտի մեջ  
բերեմ քանի մը հեղինակավոր կարծիքներ քար-  
յուղի արժեքին մասին: Վոչ միայն այս կառա-  
վարությունը, դաշնակիցներուն և Ռուսիո նման,  
պիտի գոհե Հայաստանը կենսական շահի մը,  
այլ նույն յերկրորդական աննշան շահի համար»:

Միմպլիստական այդ բացականչությունից  
հետո բերվում են և նավթային աֆորիզմները:  
Առաջինը պատկանում է Կուլիջին՝ «Ազգերու  
գերակայությունը կարելի չէ վճռորոշել քար-  
յուղի տիրացումով»:

Ապա գալիս է ֆրանսական դեսպան Հենրի  
Պերանժեն՝ «Ով վոր քարյուղ ունի, կայսրու-

թյուն ունի... աշխարհի կայսրությունը՝ հիմնված  
է ֆինանսական ուժին և վոսկիեն ավելի արժե-  
քավոր, ավելի թափանցող, ավելի ազդու նյութի  
մը (քարյուղ) միացումին վրա»:

Նլիոթ Ալվոն ավելի կտրուկ կերպով է խո-  
սում՝ «Այն յերկիրը, վոր կտիրապետե քարյու-  
ղին միջոցով, միաժամանակ պիտի իշխե նաև  
աշխարհի առևտուրին վրա: Բանակները, նավա-  
տորմիդները, դրամը, նույնիսկ բովանդակ բնակ-  
չությունը վոչինչ պիտի արժեն քարյուղին պա-  
կասին դեմ»: Յեւ այլն և այլն:

Այդ բոլոր խոսքերը բերելուց հետո՝ Գար-  
դաշյանը հայտարարում է իր կողմից՝ «Նկատի  
ունենալով վերն ըսածները, հայերը պետք է  
վստահեն վորեւ պետության: Մտային առողջու-  
թյան առաջին յեւ լավագույն նշանն է՝ դիմա-  
գրավել իրողությունները յեւ հաղթահարել հու-  
զումին: Վոչ պետք է անգիտանալ և վոչ ալ չա-  
փազանցնել»:

Լավ է ասված:

Յեւ այդ պարոնը, այսպես կոչված «հայկա-  
կան պրես-բյուրոյի» քարտուղարը, դաշնակցա-  
կան կուսակցության ամերիկյան «ղիվանագետը»  
ասում է վերոհիշյալ խոսքերն առանց շփոթվելու,  
առանց մի վայրկյան անգամ զգալու, վոր հենց իր  
սեփական խոսքերով դատապարտության սյունին  
է դամում դաշնակցական «քաղաքագետներին»:

Իր իբր թե «անկեղծ» խոստովանությամբ  
պ. Գարդաշյանը ցանկանում է վորեւ կերպ

կարգավորել նորից «նոր դեպքերի» հետևանքով ստեղծված ծանր դրությունը և ամրացնել քայքայվող դաշնակիզմի շենքը:

Նրան այդ չի հաջողվում: Յեւ ինքը, Գարդաշյանն էլ, չնայած նրան, վոր կոչ է անում «հաղթահարել հուզումը» և «չչափազանցնել»--շատ լավ զգում է այդ ամենը:

Անցնենք այժմ նրա «նոր կուրսի» քննությանը:

## 2.

Ինչ անել ուրեմն—հարց են տալիս Գարդաշյանին նրա հուսախաբված ընթերցողները: Մինչև այժմ հույս կար, վոր Ամերիկան, վորպես «Վիրսոնյան Հայաստանի» բարեկամ, կարող է և ցանկանում է ոգնել դաշնակցականներին: Վառված այդ հույսով՝ Ամերիկայի դաշնակցականները Զիլինգարյանների, Գարդաշյանների և Տիրայր յեպիսկոպոսների դեկավարությամբ ամեն կերպ ուժ են տվել Ամերիկայում հակախորհրդային պայքարին: Այժմ բոլոր այդ հույսերը քանդվում են, և «Ստանդարտ քարյուղի ընկերության» նոր քաղաքականության շնորհիվ «հուզումի» յեն մատնում խորհրդային Հայաստանի թշնամիներին:

Յեւ անհայդ ծանր կացությունից դուրս գալու համար, յերեկվա ամերիկանոֆիլ Գարդաշյանն աշաջարկում է հետևյալը... «Նկատի ունենալով վերն ըսվածները, հայերը պետք չէ վստահին

վորեւ պետության»: Խոսքը, իհարկե, Ամերիկայի մասին է, վորովհետև Անգլիայի «հովանավորությունից», ինչպես կտեսնենք քիչ հետո, դաշնակցականները չեն հրաժարվել այսօր ևս: Արտահայտության վերոհիշյալ ձևը դիվանագիտական մի միջոց է դաշնակիզմի իսկական քաղաքականության վարագործման համար:

Մենք, ասում է իր հոգվածի վերջում Գարդաշյանը, չենք կրնար ջայլամին նման մեր գլուխն ավազին մեջ թաղել վտանգին առջև... մեր փրկության միակ հավանական յեղը կկայանա պայքարելուն մեջ... կասկածը, վախը, զգուշավորությունը մեկդի այս պահուն, մենք պետք է պայքարենք քաջասրտությամբ, կռնակնիս պատին, պաշարված վազրին նման: Կովադաշտը հոս է, Ամերիկայի մեջ... Զտարյուն ամերիկացիներ—Սվանսըն, Կինսկ, Ջերարտ, Մենինսկ—և լեգեոն (!!!) մը ուրիշներ պիտի կանգնին հայուն կողքին, վորպեսզի ան արգիլե այն հրեշային անիրավությունը, վոր այս քրիստոնյա յերկրի կառավարությունը կջանա գործադրել հայցեղին նկատմամբ»...

Վերը մենք արդեն տեսնք, վոր դաշնակցական ծրագիրների քայքայումը Գարդաշյանը կապում է «քարյուղի մի վորոշ խմբակի» քաղաքականության հետ: Յեւ անհայդ «վորոշ խմբակի» գործելակերպի դեմ պայքարելու համար ել նա կոչ է անում հենվել մի ուրիշ «խմբակի» վրա:

Յեթե Գարդաշյանը հետևողական լինելը, այդ պարագայում նա անմիջապես կոչ պիտի աներ արտասահմանյան համայն աշխատավորությանը վերջ տալ «հայկական դատն» ոգտագործող ավանտյուրիստական քաղաքականությանը մի անգամ ընդմիջտ և պայքար հայտարարել վոչ թե «քարյուղի մի խմբակին» միայն, այլ իմպերիալիզմին, իմպերիալիստական դիվանագիտությանը, միջազգային վողջ բուրժուազիային: Այլ խոսքով—նա պիտի կոչ աներ այդ պարագային կապվել պայքարող պրոլետարիատի հետ, հասարակական միակ ուժի հետ, վորն իսկապես անկեղծ կերպով պայքար ե մղում բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրման համար:

Բայց Գարդաշյանները չեն կարող հանգել այդ միակ տրամաբանական յեզրակացության, վորովհետև կապված լինելով հայ բուրժուազիայի հետ—իրենք ևս շահագրգռված են իմպերիալիստական բուրժուազիայի այս կամ այն խմբակցության գիշատիչ քաղաքականության մեջ: Հայկական դաշնակիզմն ինքը միջազգային իմպերիալիզմի ազդակներից մեկն ե Մոտավոր Արեւելքում:

Յեւ ահա այդտեղ ել պետք ե վորոնել Գարդաշյանի վերջին պարբերության բացատրությունը:

Նա խորհուրդ չի տալիս պայքարել անգլիական իմպերիալիզմի և անգլիական դիվանագիտության դեմ:

60344-67

«Կոպաղաշար, ասում ե նա, հոս ե՝ Ամերիկայի մեջ»: Հետևաբար, իր ընթերցողներին ել մեր դաշնակցական դիվանագետը պահանջում ե—կենտրոնացնել իր «պայքարն» Ամերիկայում:

Նոր չե Գարդաշյանն ասում այդ խոսքերը: Դեռ Լոզանի կոնֆերանսի որերին, կարծեմ մի յերկու ամիս կոնֆերանսից հետո, նա հրատարակել եր անգլերեն լեզվով մի բրոշյուր «Նավթի, Միստր Հյուզի յեւ Չեստրի կոնցեսսիայի մասին»:

Այդ բրոշյուրի մեջ Գարդաշյանը քննադատության յենթարկելով «Հյուզին» ցուցադրում եր, վոր ամերիկյան դիվանագիտությունը Լոզանում ղեկավարվել ե «Նավթային մի խմբակի» շահերով, և վոր հենց դրա համար ել նա համաձայնության մեջ ե մտել քեմալական թյուրքիայի հետ: Իր ժամանակ ամերիկյան մամուլի վորոշ մասը զայրացած այդ բրոշյուրից այնքան ուժգնորեն նետվել եր Գարդաշյանի վրա, վոր ստիպել եր վերջինիս «ջայլամի նման գլուխն ավազի մեջ թաղել»: Իսկ նրա բարձր հովանավորն ել, «Արմենիա Պրեսս-Բյուրոյի» նախագահ միսար Ջերարդը անհրաժեշտ ե համարել հայտարարել իր կողմից, վոր ինքը ծանոթ չի յեղել իր քաղաքական բրոշյուրի բովանդակությանը, և վոր այդ բրոշյուրը լույս ե տեսել առանց իր, Ջերարդի հավանությանը:

Դեռ այդ ժամանակ ակներև եր, վոր փոքրիկ միջադեպի յետև ծածկված են Նավթային յերկու խմբակների բաղխումները, և վոր Գար-

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧЕВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



դաշյանը խարազանման ե յենթարկվել Ամերիկայում, վորպես անգլիական նավթային միություն քաղաքականության քարոզիչ:

Այսոր—այդ ամենը պարզում ե նորից հենց ինքը Գարդաշյանը:

Յեվ անա այդ կողմի վրա անհրաժեշտ ե կանգ առնել, քանի վոր Գարդաշյանն այսորվա դաշնակիցի «գլխանագետներից» մեկը լինելով՝ նյութ ե մատակարարում մեզ հայկական ռազմական սիրտիցմի ճանաչողություն համար:

Պարզենք ամենից առաջ անտեսական, կամ ավելի ճիշտ նավթային այն ֆոնը, վորի վրայ ե հենց հյուսվում ե նորագույն դաշնակիցի հակախորհրդային ինքնահատուկ քաղաքականությունը:

### 3.

1924 թվին, անգլիական բանվորական կառավարությունը հրատարակել ե «նավթային բաղադրականություն» մասին շատ հետաքրքրական մի գրքույկ: Այդտեղ հեղինակը, Պեշ Արնոտը բավական մանրամասն քննություն յենթարկելով միջազգային խոշոր նավթային միությունների գործունեությունը, պարզում եր միաժամանակ թվերով և կոնկրետ փաստերով այն, վոր միջազգային գլխանագիտություն վողջ քաղաքականությունը կապված ե ամենասերտ կերպով նավթային տարբեր միությունների բաղխումների և տնտեսական մրցումների հետ:

«Թեև, կարգում ենք այդ գրքի վերջին մա-

տում, տրեստները նավթային միջազգային պահեստները և համապատասխան շուկաները բաշխել են միմյանց մեջ և վորոշ «հաշտություն» հաստատել, բայց այդպիսի հաշտությունն իմպերիալիստական տրեստների միջև կարող ե լինել միմիայն զինադադար, վորն ինքն արդեն պատրաստում ե նոր ռազմական գործողություններ... Ձինադադարը նավթային խնդրի բնագավառում կլինի ժամանակավոր և միշտ կմնա անհաստատ... Ապա հեղինակը շեշտում ե, վոր այդ «ժամանակավոր զինադադարը» վոչ մի պարագայում չի կարող գալիք պատերազմի առաջն առնել, և վաղ թե ուշ նավթային խոշոր տրեստները նորից կընդհարվեն արդեն «բաժանված նավթային աերիտորիաների» նոր բաշխման համար...\*)

Պեշ Արնոտի գրքին կցված առաջաբանում բերված են նաև կլեմանտյե խոսքերը նավթի նշանակություն մասին, վոր ասել ե նա 1918 թ. ամերիկյան պրեզիդենտ Վիլսոնին ուղղված մի նամակի մեջ... «Համաձայնական զորամասերը չպիտի մի վայրկյան անգամ մնան առանց բենզինի, վոր այնքան անհրաժեշտ ե ավտոմոբիլների, աերոպլանների և դաշտային տրակտորային հրետանիների համար: Բենզինի բացակայությունը կարող ե միանգամայն անդամալուծ անել մեր բանակները»...

\*) Р. Педж Арнот.—«Нефтяная политика». Москва, 1925, к 95.

Ֆրանսական բուրժուազիայի այդ ներկայացուցչի խոսքերը շատ լավ բնորոշում են այն, վոր նավթը բացի տնտեսական խոշոր արժեքից ունի նաեւ մեծագույն ռազմա-ստրատեգիական նշանակութիւն:

Դրա համար եւ միջազգային պատերազմի ժամանակ բոլոր պետութիւններն եւ կենտրոնացրել եյին իրենց ուշադրութիւնն ամենից առաջ հենց այդ ուղղութեամբ: Անգլիական զորքերը Մոտավոր Արեւելքում այդ ուղղութիւնն եյին բռնել հենց պատերազմի առաջին օրերից: Նրանք կենտրոնացած են յեղել Մուսուլի նավթահանքերի շուրջը: Բաղդադը և Միջագետքը քննվել են հենց այդ «նավթային տեսակետից»: Գերմանական մի տնտեսագետ կանգ առնելով այդ կողմի վրա անում է շատ հետաքրքրական դիտողութիւններ անգլիացիների Մուսուլի նկատմամբ մշակած ստրատեգիայի մասին: Մուսուլը, նկատում է այդ տնտեսագետը, բռնազրաման է յենթարկվում անգլիացիների կողմից վոչ թե Մուսուլի նավթահանքերի անմիջական շահագործման, այլ իրենց պատկանող պարսկական նավթի գների և անգլիական մենատիրութեան ապահովման համար: Յեւ այսօր եւ—անգլիացիների հիմնական նպատակն է—հնարավորութիւն չտալ իմպերիալիստական վորեն ուրիշ պետութեան իր ձեռքն առնել Մուսուլի հանքերը և դրանց օգտագործման միջոցով մրցակից ուժ

դառնալ անգլիական նավթարդյունաբերութեան հանդէպ:\*)

Թե վորքան մեծ նշանակութիւն է ունեցել նավթային խնդիրը միջազգային պատերազմի օրերին, այդ յերևում է գերմանական գեներալ Լյուդենգորֆի և անգլիական գեներալ Գենստերվիլի հրատարակած մեմուարներէից: Թե առաջինը, և թե յերկրորդը շատ վստահ կերպով ընդգծել են, վոր իրենց կովկասյան արշավանքների հիմնական նպատակակետը յեղել է — Բագվա նավթային շրջանը: Լյուդենգորֆը նկարագրելով Գերմանիայի ծանր դրութիւնը, նավթի և լուսավորութեան բացակայութիւնը Գերմանիայում, միաժամանակ շեշտում է, վոր ուումի-նական նավթը միանգամայն անբավարար եր գերմանական բանակի տրանսպորտի կարիքների ապահովման համար. դրա համար եւ մենշնիկների կողմից հրավիրված գեներալ Կրեսսի առաջին նպատակներից մեկն է լինում կարգի բերել Բաթում — Թիֆլիս — Բագու յերկաթուղագիծը նավթի արտահանման կարգավորման համար: Գրեթե միևնույն պատկերն է նկարագրում և Դենստերվիլը:

Դենստերվիլին Բագու յեն հրավիրում, ինչպես հայտնի յէ, Բագվի դաշնակցականները: Այդ մասին հաղորդում է ինքը Դենստերվիլը:

Անգլիական հայտնի հրապարակագիրներէից

\*) Տես Шульце.—Борьба за персидско—мессопотимскую нефть. Москва, 1925, Էջ 93:

մեկը, Արաուր Մուրը կանգ առնելով Բագվի ոկկուպացիայի վրա, անգլիական «Թայմզ»-ի մեջ կարող կերպով հայտարարել եր, վոր իրենք կովկաս են ուղևորվել, վորպեսզի «բռնագրավեն Բագվի նավթային հանքերը»\*)։ Բագվա խոշոր նավթային ընկերություններից մեկի բաժնետերերի ընդհանուր մի ժողովի մեջ, Հերբերտ Ալլենը—«Բիրբի-Եյբաթի նավթային կամպանիայի» նախագահը հետևյալ խոսքերով եր ընորոշել Բագվի ոկկուպացիայի հեռանքով սաեղծված կացութունը։ «Ռուսական նավթային արդյունաբերությունը յեթե համապատասխան կերպ կազմակերպվի բրիտանական ղեկավարությամբ, կարող ե ներկայացնել չափազանց արժեքավոր վայր կայսրության համար»։

Անգլիական այդ արշավանքը, վոր կազմակերպվել եր անգլիական խոշորագույն նավթային միություն «Ռոյալ-Պեճ-Շելլ»-ի ակտիվ ձեռներեցությամբ ավարտվում ե պարտությամբ։ Դրութունը չեն փրկում նաև կովկասյան հակահեղափոխական հանրապետությունները, վորոնք Անդրկովկասի բանվորների և գյուղացիների ապստամբության հետևանքով տապալվում են։

Սակայն անգլիական իմպերիալիզմը դրանից հետո յեղ մեծագույն ուշադրությամբ հետևում ե «ռուսական նավթին» և ամեն կերպ աշխատում ե համաձայնության գալ Խորհրդային հանրապե-

\*) Фишер.— «Империализм нефти». Москва 1927, к. 25.

տության հետ նավթի առևտրի և եքսպորտի մասին։

Իր հերթին ամերիկյան խոշոր նավթային տրեստներն ել աշխատում են խանգարել այդ համաձայնությունը և իրենց ձեռքն առնել խորհրդային նավթի արտադրամանյան առևտրի մոնոպոլյան։

Յերկու խոշոր իմպերիալիստական պետությունների մրցակցությունը վերջին տարիներին մեծագույն չափով զարգացել ե այդ հողի վրա։ Ամերիկյան կառավարությունը վարել ե «Ստանդարտ Ոյլ»-ի, իսկ անգլիական կառավարությունն ել «Շելլ» քաղաքականությունը։

Յեվ շենովայի, և Լոգանի խորհրդաժողովների ընթացքում նավթային խնդիրը գրավել ե առաջնակարգ տեղ և պայմանավորել իմպերիալիստական կառավարությունների համապատասխան քաղաքականությունը Խորհրդային Միության հանդեպ։

Շատ հետաքրքրական ե այդ կողմից ամերիկյան հրապարակագիր Ֆիշերի ուսումնասիրությունը «Նավթային իմպերիալիզմի» մասին։ Այդ գրքի մեջ բավական մանրամասն կերպով նկարագրված ե իմպերիալիզմի նավթային քաղաքականությունը։

Լոգանի խորհրդաժողովին, պատմում ե Ֆիշերը, բացի գեկորատիվ այն ճառերից, վոր արտասանվում եյին դահլիճում, տեղի եյին ունենում անհամեմատ ավելի կարևոր և վճռական

հշանակութիւնն ունեցող բանակցութիւններ յերկրագնդի խոշոր համալսարան տրեսորների հերկայացուցիչների և Կրասնի միջև:

Սովորական «գիւմանագետների» հետ միասին ձեռնով և Լոգան ելին յեկել հաւ այդ տրեսորների լիազորները, վորոնք փաստորեն վորոշ ընթացք ելին տալիս իրենց պետութիւնների քաղաքականութեան: Շատ ուշագրավ է հենց այդ կողմից Ֆիշերի գրքի մեջ բերված մի վավերագիրը: Դա—Կերգոնի անմիջական հանձնարարութեամբ անգլիական արտաքին գործերի փոխհասարարի ձեռքով գրված մի համալսն է, ուր այդ վերջինը գիմելով Կրասնին հաղորդում է նրան, վոր «Ռոյալ-Դեմ-Շեյլ» համալսին խմբի ներկայացուցիչ Բոյլը անգլիական կառավարութեան համաձայնութեամբ և համալսութեամբ է վարում Կրասնի հետ իր բանակցութիւնները:

«Նորին Կայսերական Մեծութեան կառավարութիւնը հույս ունի, վոր բանակցութիւնները կտան արագ և բավարար համաձայնութիւն»:

Այդպէս է ավարտում անգլիական կառավարութեան պաշտոնական ներկայացուցիչն իր համակը:

Շեյլի ներկայացուցիչները ցանկանում ելին ինչպէս հայտնի յե, ստանալ կոնցեսիա և իրենց ձեռքին կենդրոնացնել խորհրդային համալսի երսպորտը: Խորհրդային հանրապետութեան համալսին սինգիկատը այդ առաջարկները չի ընդունում, և փոխարեն դրան իր ձեռքին կենտրո-

նացնելով համալսի վորջ երսպորտը՝ առանձին համաձայնութիւններ և առևտրական պայմաններ է կնքում տարբեր առևտրա-արդյունաբերական խմբակների հետ: Այլ խոսքով շարունակում է իր անկախ քաղաքականութիւնը և համալսի միջոցով նոր հարվածներ է հասցնում իմպերիալիստական Անգլիային: Անգլիական «Շեյլ» խմբակը մեծագույն ջանքեր է թափում ուժեղացնելու իր ճնշումը Խորհրդային հանրապետութեան դեմ: Նա համալսում է և գնում նախկին համալսաբերի բաժինները, վորձ է անում հանդես գալ, վորպէս այդ նախկին սեփականատերերի լիազոր և ժառանգորդ, բայց և այնպէս չի կարողանում խանգարել խորհրդային համալսի երսպորտին: Թե վորքան զգալի հարված էր այդ երսպորտը Շեյլի համար, յերևում է հետևյալ թվերից\*):

Խորհրդային Միութիւնը համալս է արտահանել

|                | 1923—24 | 1924—25 | անգլ. տոնն |
|----------------|---------|---------|------------|
| Գերմանիա . .   | 69.100  | 175.500 | »          |
| Ֆրանսիա . .    | 56.500  | 136.300 | »          |
| Իտալիա . . .   | 41.900  | 241.840 | »          |
| Թիւրքիա . .    | 15.200  | 31.800  | »          |
| Յուգո-Սլաւիա — | —       | 8.300   | »          |
| Յեգիպտոս . .   | 75.000  | 180.400 | »          |
| Անգլիա . .     | 180.200 | 321.600 | »          |

\*) Р. Фишер. Կջ 93:

Այդ բոլորն, ի հարկէ այնքան եւ դուրեկան չպիտի լինեն նավթային խոշորագոյն այն միութեան (Շէլլ) համար, վորը մինչ այդ միակ տիրակալը և մենատերն եր յերկրագնդի վողջ նավթային շուկայում:

Խորհրդային Միութիւնն իր անկախ տնտեսական քաղաքականութեամբ վոչ միայն զորավոր հարված եր հասցնում անգլիական տնտեսութեանը, այլև նավթի միջոցով ուժեղացնում եր քաղաքական իր կշիռն ու ազդեցութիւնը Մոտավոր Արեւելքում: Իսկ այդ արդէն չեւր կարողանում հանդուրժել անգլիական իմպերիալիզմը:

Մյուս կողմից «Շէլլ» ամերիկյան մրցակիցն եւ, ամերիկյան «Ստանդարտ Ոյլ» միութիւնը դառնալով ավելի ակտիւ ուժ միջազգային շուկայում, բացահայտ կերպով պայքար եր սկսում «Շէլլ» դեմ և հանդես եւր գալիս, վորպես խորհրդային նավթի նոր գնորդներից մեկը: Յեւ այդ արդէն ավելի ևս ջղայնացնում եր անգլիական նավթային դիվանագետներին:

#### 4.

Յերկրագնդի յերկրորդ խոշորագոյն նավթային միութիւնը — ամերիկյան «Ստանդարտ Ոյլ» ընկերութիւնն ե: Այդ ընկերութիւնն իր կոնտրոլի ներքո յե պահում 63 ամերիկական ակցիոներական ընկերութիւններ և միաժամանակ բաղմամբով ուրիշ առևտրական հաստատութիւններ Ամերիկայից դուրս: «Ստանդարտ

Ոյլ»-ն «ունի սեփական յերկաթուղիներ, նավթուղիներ, սեփական նավեր կերասինի փոխադրութեան համար, նավթային ամբարներ և նավթի վերամշակման համար բաղմամբով գործարաններ յերկրագնդի բոլոր մասերում...»): Նա ինքն ե պատրաստում անհրաժեշտ տաւանները, նստարանները և այլ լրացուցիչ պարագաները: Նավթային խոշորագոյն այդ միութիւնը դիվիզենա ե տալիս իր բաժնետերերին 40-ից մինչև 50 տոկոս. «Ստանդարտ Ոյլ»-ը գտնվում ե փաստորեն միլիարդեր Բոկֆելլերի ձեռքին, վորը «գնել ե ամերիկյան ամենաարժեքավոր յերկաթե և պղնձե հանքերը»: Պետք ե ասել, վոր Հնայած հսկայական այդ ուժին, «Ստանդարտ Ոյլ»-ն ունի Ամերիկայում ավելի ուժեղ մրցակից: Դա Մորգանի խումբն ե՝ «Պոպատե Կոնցերնը», վոր իր կոնտրոլին ե յենթարկում Միացյալ Նահանգների վողջ հարստութեան <sup>1</sup>/<sub>5</sub>-ը:

Այսպես թե այնպես «Ստանդարտ Ոյլ»-ը շնորհիւ իր առանձին դիրքին միջազգային շուկայում — մեծագոյն քաղաքական կշիռ ունի Մորգանի վերոհիշյալ խմբակի հետ միասին Միացյալ Նահանգներում:

Մինչև վերջին տարիներն Ամերիկան այնքան եւ շահագորգոված չեւր համարում իրեն վոչ ամերիկյան նավթային շուկաների գրավման մեջ: Հսկայական նավթային պահեստներ ունենալով՝

\*) Роберт Лифман.— „Картели и тресты“ изд. «Эконом. Жизнь». Москва, 1925 г. 49 139:

նա սպառում էր իր նավթը բուն Ամերիկայում: Դեռ ավելին է: Չնայած նույնիսկ նրան, վոր միջազգային նավթային ընդհանուր պրոդուկցիայի մեջ ամերիկյան նավթը գրավում է 70 տոկոս, Ամերիկան սպառելով վորջ այդ քանակությու- նը, դեռ 10 տոկոս էլ ներածում էր Մեքսիկա- յում և Հարավային Ամերիկայում արտադրվող նավթից:

Դրա համար էլ միջազգային նավթային շու- կան անմիջական կախում ունի Ամերիկայից:

Դրան պետք է ավելացնել նաև այն, վոր ա- մերիկյան նավթային պահեստները շահագործ- վում են վերջին տարիներս ամենախնտենսիվ կերպով: Այդ հանգամանքը թելադրել է մի շարք նավթային մասնագետների (պրոֆ. Սարիփով) առաջադրել այն տեսակետը, վոր ամերիկյան նավթային պահեստներն արդեն սկսում են նը- վազել, և դրա համար էլ Ամերիկան ստիպված պիտի լինի հոգ տանել նոր նավթային պահեստ- ների մասին: Վորջ խնդիրը նրանումն է, վոր այսօր էլ Ամերիկայում նավթի պահանջը քանի գնում է, ավելի և ավելի ուժեղանում է: Բազ- մանում են ավտոմոբիլները, աերոպլանները, նավթային վառելիք գործածող նավերը... 1909 թվին Միացյալ Նահանգներում կար 900,000 ավ- տոմոբիլ, իսկ 1924-ին այդ թիվը բարձրանում է մինչև 17 միլիոն 731,486 հատի\*):...

В. Свердлов. — Мировая нефтепромышленность и перспективы нефтеэкспорта СССР. («Плановое Хо- зяйство» 1925 г. № 5. 216—217):

Նույնն ավելի մեծ մասշտաբով նկատելի յե և միջազգային շուկայում: Վորջ տրանսպորտը ներկայումս քարածուխից անցնում է նավթի գործածության: Նավագնացության և առանձնա- պես ռազմական նավագնացության համար նավ- թը ներկայացնում է խիստ մեծ արժեք: Նա նախ և առաջ ավելի հարմար է տեղավորվում և ավելի քիչ տեղ է բռնում: Ապա «հնարավորու- թյուն է տալիս ովկյանոսային նավերին ավելի յերկար մարշրուտ բռնել: Միաժամանակ կրճատ- վում է ծառայողների թիվը 2,5 տոկոս, իսկ դի- վելմոտորներ ունեցող նավերում՝ նույնիսկ մինչև 60 տոկոս\*):

Այդ բոլոր պայմանները հսկայական չափով նպաստում են նավթի սպառողների բազմազ- մանը:

Վերջին հանգամանքի շնորհիվ չափազանց բարձրանում է նաև խորհրդային նավթի արժե- քը, վորը ներկայումս քիչ տեղ չի բռնում եքս- պորտային նավթի մեջ: Միացյալ Նահանգները չեն կարողանում բավականանալ իրենց նավթով, իսկ անգլո-հոլանդական նավթային ընկերու- թյունն էլ հազիվ է լրացնում նավթի պահանջը: Թե վորջան մեծ տեղ է բռնում խորհրդային նավթը տարբեր յերկրների իմպորտի մեջ, այդ յերևում է ընկ. Լոմովի հաղորդած հետևյալ տո- կոսներից՝ Անգլիա—3,8 տոկոս, Գերմանիա—10 տոկոս, Ֆրանսիա—4,4 տոկոս, Իտալիա—5,3

\*) Նույնտեղ՝ էջ 218:

տողոս, Բելգիա—10,3 տողոս, Հոլանդիա—5,1 տողոս, Թյուրքիա—24 տողոս, Յեզիպտոս և Մոտավոր Արևելքի ուրիշ յերկրներ—41 տողոս»։ Յեթե այդ բոլորին ավելացնենք այն, վոր խորհրդային համալսարաններու թիվունն ամերիկանացման և ռացիոնալիզացիայի շնորհիվ բարձրացնելով արտադրութիւնը որսորդե ուժեղացնում ե նաև երսպորտը, վոր խորհրդային հանքերն իրենց հարստութեամբ զրավում են առաջնակարգ տեղ, այն ինչ ամերիկյան հանքերն ատիճանաբար նվազում են, այդ պարագային հասկանալի կլինի «Ստանդարտ Ոյլ»-ի առանձին քաղաքականութիւնն արևելյան և խորհրդային համալսարանի նկատմամբ։

Նավթային խոշորագույն այդ կոնցերնը չի ցանկանում յենթարկել անգլիական համալսարանութեանը, և բնականաբար աշխատում ե ուժեղացնել իր համալսարան պահեստներն արեւելյան համալսարանի միջոցով։

Դրանով պետք ե բացատրել անշուշտ նաև ամերիկյան կառավարութեան յուրահատուկ դորժեւակերպը մի կողմից Թյուրքիայի, իսկ մյուս կողմից ել խորհրդային Միութեան հանդեպ։

Դեռ Լոզանի խորհրդաժողովի որերին նկատելի յեր այդ ամենը։ Ամերիկյան մեծագույն աշխատանք ե թափել այդտեղ վորևէ մի բաժին ստանալ Մուսուլի հանքերից։ Յեւ «Ստանդարտ Ոյլ»-ին հնարավորութիւն ե տրվել իր վորոշ մասնակցութիւնն ունենալ (25 տողոսով) Մու-

սուլի հանքերի շահագործման համար հետագայում կազմակերպված ընկերութեան մեջ։

Միաժամանակ դրա հետ միենունն Ամերիկյան միութեանն աշխատել ե առևտրական բանակցութիւններ միջոցով ձեռք բերել համալսարան Խորհրդային Միութեանից։ «Ստանդարտ Ոյլ»-ը առաջարկել ե մի անգամից իրեն ծախել խորհրդային ամբողջ համալսարան ե ունեցել դրանով իր տնտեսական ազդեցութեանը յենթարկել առաջին հերթին արևելյան շուկան։ Հակառակ դրան «Նավթային Սինդիկատը», վոր հաւատակ եր դրել իրեն «Էներգոնալ Միջերկրականի շրջանում և հաղթանարել բրիտանական մրցակիցներին» (Ֆիշեր) առաջարկել եր ծախել միմիայն համալսարան 50 տողոսը։ 1925 թ. հոկտեմբերին, «Նավթային Սինդիկատը» յեւնելով Խորհրդային Միութեան մշակած արտաքին առևտրի ընդհանուր քաղաքականութիւնից դարձյալ անհնարին ե գտնում համաձայնութիւն կնքել։ Փոխարեն դրան Սինդիկատն առանձին առևտրական պայմանագիր ե կազմում և ծախում ե 1925-ին «Ստանդարտ Ոյլին» 290.000 տոնն կերասին և բենզին։ Բանակցութիւնները դրանից հետո յել շարունակվում են, և հետագայում փոխադրվում են Լոնդոնից Փարիզ։

Անգլիական համալսարան «Շելլ»-ի համար դեռ այդ որերից ակներև ե դառնում այն, վոր վաղ թե ուշ նա պիտի կորցնի իր արտոնյալ դիրքը։

Դեռ երբեք արդեն այդ որերից մեծագույն ջանքեր եր թափում խանգարելու առևտրական համաձայնությունները «Նավթային Սինդիկատի» և «Ստանդարտ Ոյլ»-ի միջև:

Յեւ անա խորհրդային Միություն դեմ ուղղված հակահեղափոխական պայքարը կապված է ամենատեսակետից «Րոյալ-Դեմ-Նեյլ»-ի ընդհանուր նավթային քաղաքականություն հետ:

Պետք է նկատել, Վոր «Շեյլ» դեկավարներն ամեն կերպ աշխատում են վորեւ համաձայնություն գալ ամերիկյան նավթային կոմպանիայի հետ և մշակել «Նավթային Սինդիկատի» դեմ ընդհանուր ֆրոնտ: Մինչև այժմ նրանց այդ չի աջակցել, Բայց այդ աշխատանքը շարունակվում է:

Ահա հենց դրա համար էլ հակախորհրդային մամուլի և հակահեղափոխական կուսակցությունների գործունեությունը խիստ կարևոր արժեք են ներկայացնում անգլիական իմպերիալիզմի համար, վորովհետև ոգնում են «Շեյլ»-ին: Հակահեղափոխականների գործունեությունն ոգտադործելով—անգլիական նավթային իմպերիալիզմն աշխատում է հետ մղել իր բոլոր մըըցակիցներին նավթային շուկայից և մնալ իր նախկին մենատիրական կացություն մեջ\*): Թե

\*) Այս հոդվածի մեջ յես դիտավորություններ կանգ չեմ առնում անգլիական իմպերիալիզմի գործունեություն ուրիշ մոմենտների և տնտեսական այլ գործոնների վրա, վորովհետև ներկա պարագայում մեզ հետաքրքրողը նավթի պրոբլեմն է:

վոր ուղին կնտրի ամերիկյան կառավարությունը—մենք չենք կարող այժմ նախատեսել: Մի բան ակնհայտ է: Ամերիկյան առևտրաարդյունաբերական վորոշ խմբակների մեջ ներկայումս ավելի և ավելի ուժեղանում է այն համոզումը, վոր գործնական առևտրական համաձայնությունները խորհրդային Հանրապետություն հետ կարող են նկատելի հարված հասցնել ամերիկյան կառավարության ամենաուժեղ հակառակորդին—անգլիական իմպերիալիզմին և թուլացնել վերջինիս տնտեսական-քաղաքական դիրքերն Արևելքում և միջագային շուկայում:

5.

Այդ բոլորը, իհարկե, առանձին շղայնություն է առաջ բերում անգլիական իմպերիալիստների և դրանց քաղաքականությունն առաջ տանող հակահեղափոխական զանազան խմբակցությունների շարքերում:

Վերը մենք շեշտեցինք արդեն, թե վորքան խոշոր դեր են կատարում կովկասյան հակահեղափոխանների յելույթները նավթային «վեճերի» և բանակցությունների ընդհանուր «պատմություն» մեջ:

Դեռ 1924-ին—պարզ եր այդ ամենը: Դոկտոր Նանենբուրգը, գերմանական «Դեյչե Ցայտունգ» լրագրում (17 սեպտ. 1924) վրացական մենչևիկներին ապստամբության առթիվ հայտնել եր ի միջի այլոց հետևյալ կարծիքը՝ ...«Ճիշտ

այն մոմենտին, յերբ բրիտանական նավթային քաղաքագետները հասկացան, Վոր անգլո-ռուսական առևտրական համաձայնությունը Վոշ մեկ ոգուտ չի առ նավթի գրավման ուղղությամբ, բռնկվեց մենշևիկյան ապստամբությունը Կովկասում: Ժորդանիան, վրացական կառավարությունն նախագահը, առաջարկեց միջազգային միջնորդություն. ըստ եություն դա—գիվանագիտական շղարշումն եր. նավթային իմպերիալիզմի խաղի համար...\*)։ Նույնն ասում եր Ֆրանսական «Նավթային սուբհանդակ» թերթը սեպտեմբերի 12-ին։ «Շատ հավանական ե, Վոր ապստամբությունն աջակցությունը գալիս ե այն խմբից, Վորն ունի խոշոր նավթային շահեր»։

Կարծում ենք այդ ամենը բավական ե։

Ընթերցողն ինքն արդեն կարող ե վորոշ յեզրակացություններ անել։ Յես գիտավորությունը մի փոքր յերկար կանգ առա «նավթային պրոբլեմի» այդ պատմության վրա, վորպեսզի ավելի պարզ լինի այն բեալական ֆոնը, վորի վրա հյուսվում ե կովկասյան հակահեղափոխական կազմակերպությունների վողջ գործունեությունը։

Բավական ե միայն հիշել մոտագա անցյալի մի քանի ցայտուն եջերը, թեկուզ հենց դաշնակցական, մենշևիկյան և մուսավաթական կազմակերպությունների բլոկը 1927 թվին և նրանց պարիզյան հայտնի գեկլարացիան—Սհարոնյանի,

\*) Ցիտատները հանում ենք արդեն հիշված Ֆիշերի գրքից։

Չխենկելու ե Թոփչիբաշևի ստորագրություններով։

Թոփ հիշե ընթերցողը նաև Սհարոնյանի թեթևոլիկ «բաց նամակը Չիչերինին», և ապա յերկու տարուց հետո—մի ուրիշ դաշնակցականի, մեզ արդեն ծանոթ Գարդաշյանի «նամակը Մոսկվայի բայլշևիկներին»... Այդ բոլոր դուռմենաները գրվել են իր ժամանակ անգլիական իմպերիալիստական գիվանագիտություն հրահանգներով և մի հիմնական նպատակ են ունեցել միշտ—շղարշել նավթային իմպերիալիզմի արշավանքը և «ազատագրական» բնույթ տալ անգլիական կառավարության քաղաքականությունը։

Յեվ յերբ ավերացում ենք այդ բոլորին կովկասյան հակահեղափոխականների ընդհանուր «կենդանությունը» վերջին յերկու տարիների ընթացքում, «Պրոմտեյի» կազմակերպումը, դաշնակցականների և ռուս միապետականների միջև կայացած խորհրդակցությունները, Սատիսֆակցիայի ավանաները միապետականների հասցեյին և նրա «մարգարեությունները» Սորհրդային Իշխանության «շուտափութ անկման» մասին, դաշնակցական զանազան խոշոր ու մանր գործիչների գեմոնատրատիվ յելույթները «փեարվար 18-ի» առթիվ—մեզ համար ակներև ե դառնում, վոր հայ բուրժուազիայի կուսակցության այդ «կենդանություն» աղբյուրը գտնվում ե Լոնդոնում։

Միևնույն Լոնդոնն ե դրամ և ռեցեպաներ

մատակարարում դաշնակցական գործիչներին և միմյանց հետևից յերկրագնդի զանազան մասերում վայրկենաբար ըսնող և մեկ յերկու ամսից հետո անհետացող թերթերին:

Բոլոր այդ «գործիչներն» ու փախստական նախարարները խոսում են հայ ժողովրդի «ազատագրման» և «հայկական հարցի» մասին: Բայց այսօր միամիտի համար անգամ պարզ է, վոր ազգայնական դատարկ այդ շաղակրատությունը լոկ մի միջոց է հայ նավթային բուրժուազիայի այն հատվածների համար, վորոնք կապված են անգլիական իմպերիալիզմի հետ իրենց տնտեսական շահերով:

Անցյալումն էլ «Հայկական հարցը» յեղել է մի միջոց և պատրվակ բուրժուազիայի քաղաքականության վարագուրման համար:

Իր ժամանակ «Վիլսոնի հայտնի ծրագիրն» էլ յեղել է իրապես մի գենք ամերիկյան բուրժուազիայի վորոշ խմբակցությունների համար:

Այդպես է յեղել Զերարդի պաշտպանած «Ազատ Հայաստան»-ը:

Ամերիկյան բուրժուազիան շատ շուտ մոռացության է մատնել իր դեկլարացիաները, վորովհետև նա յեկել է այն համոզման, վոր նրա համար անհամեմատ ավելի շահավետ և նպատակահարմար է իրեն հետաքրքրող «նավթային պրոբլեմը» լուծել անմիջական առևտրական-տնտեսական բանակցությունների միջոցով Թյուրքիայի հետ: Յեվ այդ գործն Ամերիկյան հանձ-

նարարել էր Պոլսում գտնվող ամերիկյան ռազմանավերի պետ—«միստր Բրիստոլին»: Նավթային վայրերի բռնագրավման համար է առաջադրվել նաև «Միացյալ Հայաստանի» «ազգային ոչախ»-ի գաղափարը: Անգլիական զինանագիտությունը Միջագետքի վերջնական բռնագրավումից հետո (այլ խոսքով նավթային ընդհանուր «ծրագրի» մի մասի բեալիզացիայից հետո) դեն է նետում առաջին ծրագիրը և առաջադրում է «ազգային ոչախ»-ի գաղափարը:

Մակայն քաղաքական Նոր այդ նախագիծն էլ ժամանակավոր մի գենք էր լոկ իմպերիալիստական բուրժուազիայի համար, վորը ցանկանում էր «հայկական ոչախ»-ի կամ հայ գաղթականական քաղաքների (Բաքուք-Նահր-ե-Ումար) ու կայանների (Սիրիա) միջոցով պատրաստի լծնդանթային միս ունենալ ծեռքի տակ Մուսուլի նավթահանքերի պաշտպանության համար:

Պատահական յերևույթ չպիտի համարել, վոր Նանսենի գործնական բնույթ կրող ծրագիրը քանդելուց հետո, իմպերիալիստական Անգլիան կարողանում է գումարներ գտնել սիրիական ծրագրի համար: Սիրիայում տեղավորվող գաղթականությունը— «Ռոյալ-Դեմ-Շեյլ»-ի անդամների մեկի, Կյուլպենկյանի համոզումով կարող էր այսպես թե այնպես ոժանդակ ուժ հանդիսանալ անգլիական կառավարության համար: Իսկ այդ արդեն նշանակում էր, վոր «վտանգի» ժամանակ նավթային իմպերիալիզմը կարող էր

միշտ ոգնութեան կանչել միտքը կյուլպենկյանի՝ «հայրենակիցներին» — «Շեղ»-ի նավթահանքերի պաշտպանութեան համար:

Նավթն այդպիսով յերեկ ել, այսօր ել, իր առանձին գունավորումն ե տալիս «հայկական» տարաբախտ հարցի աղմկարարների գործունեութեանը:

«Հայ ժողովրդի ազատագրման» գաղափարը խորամանկ կերպով առաջադրվել ե իմպերիալիզմի նավթային արշավանքի համար:

Յեւ Դաշնակցութիւնը կատարում ե ներկայումս նենց այդ գործը: Նա կատարում ե այդ համոզված կերպով, վորովհետեւ լինելով հայ կապիտալի ուղմական կազմակերպութիւն՝ սերտորեն կապված ե անգլիական յեւ միջազգային իմպերիալիզմի հետ: Զուր ե Գարդաշյանը դիմում զանազան սոփեստութիւնների ոգնութեան մտազա անցյալի դեպքերի վարագուման համար:

Նրա շաղակրատութիւնը ե կեղծ ու փարիսեցիական բացականչութիւնները չեն կարող վռչ վռքի խաբել:

«Նավթի» մասին նա խոսում ե միմիայն վորոշ մոմենտներին ե նրա համար, վորպեսզի նավթային անգլիական խմբակի հանձնարարութեամբ ուժ տա այն ընդհանուր արշավին, վոր կազմակերպվել ե խորհրդային Միութեան դեմ: «Հայերը, գոչում ե Գարդաշյանն իր մի

ուրիշ հողվածի մեջ («Դավը—հայ ցեղին դեմ» — «Հայրենիք» № 4752 ), իրենց բարոյական ու որինական իրավունքին մեջ են պայքարելու այս կառավարութեան անիրավ ընթացքի դեմ»: Մինչև վերջին ժամանակ «Հայրենիք»-ի ղեկավարներն ուրիշ յերգ եյին յերգում: Ըստ յերևույթին «գրութիւնը» այնքան փոխվել ե Ամերիկայում, վոր լուրջ կերպով «ցնցել» ե խորհրդային Իշխանութեան թշնամիներին:

Բանվոր դասակարգի համար, բոլոր իմպերիալիստական պետութիւնները յեւ դրանց սահմաններում գործող բոլոր տրեստներն ել միեւնոյն միջազգային իմպերիալիզմի հատվածներն են: Պրոլետարիատի պայքարն ուղղված ե բոլոր խոշոր ու մանր, նավթային ու յերկաթյա, յերկաթուղային յեւ ծովային «արքաների» տիրակալութեան դեմ: Արտասահմանյան աշխատավոր առաջավոր գնդերը պետք ե կարողանան նշմարել Գարդաշյանի իդեոլոգիայի իսկական բովանդակութիւնը: Գարդաշյանների «Նոր քեմփեյնին» նրանք պիտի հակադրեն իրենց դասակարգային քաղաքականութիւնը՝ միջազգային իմպերիալիզմի, իմպերիալիստական բոլոր ուժերի, ե նավթային բոլոր միութիւնների դեմ: Յեւ միևնույն ժամանակ հենց իրենց կազմակերպված այդ պայքարով նրանք պիտի միանգամ ընդմիշտ պատռեն իմպերիալիզմին սպասավորող հայկական այն հրապարակագիրների դիմակները, վո-

բոնք միանալով Նորհրդային ԽՍՀՄ-ի ղեկավարության գեմ  
ուղղված ընկերություն բանակին «նոր գույն» են  
տալիս իրենց հակահեղափոխական ընդհանուր  
արշավին:



4166 25 4.

348

Lat

my

up

my